ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆՍ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի

ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2022 թվականին իրականացվել են կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքները:

Ուսանողների հետ կազմակերպվել են բազմաբնույթ սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են աշխատաշուկայի պահանջարկին, գործատուներին ներկայանալու հմտություններին, ՈՒԹՀՌ վերլուծությանը և այլ թեմաների:

Կազմակերպվել են այցելություններ թանգարաններ, որոնց արդյունքում ուսանողները ծանոթացել են Գյումրու մշակույթին, նրանց մոտ ձևավորվել է գեղագիտական ճաշակ, գեղեցիկը գնահատելու կարողություն և ազգային կոլորիտը պահպանելու անհրաժեշտության գիտակցում:

Իրականացվել են հետևյալ դասընթացները՝

- **2022թ. սեպտեմբերի 7-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների մոտ կարիերիայի կենտրոնը կազմակերպել էր դասընթաց՝«Ուսանողների իրավունքները և պարտականությունները» թեմայով: **Նպատակը՝** իրավունքների և պարտականությունների իմացություն և կիրառում:
- **2022 թվականի սեպտեմբերի 7-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել էր «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթացներ, դասընթացիներին մասնակցում էին «Խոհարարական գործ՝ խոհարար» երկրորդ և «Համակարգչային օպերատոր՝ օպերատոր համակարգչի» առաջին կուրսի ուսանողները, որի նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների արդյունավետ աշխատանքային հարցազրույցի մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորումն է:

Դասընթացի թեմաներն էին.

- Ինչպե՞ս կազմել մրցունակ աշխատանքային կենսագրական (CV)
- Մրցունակ մոտիվացիոն նամակ գրելու հմտություններ
- Աշխատանքային կենսագրականի տեսակները
- Աշխատանքային հարցազրույց

- 2022թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Ի՞նչ է կարիերայի կենտրոնը (նպատակ, գործառույթներ)» թեմաներով դասընթացի հերթական հանդիպումները: Սեմինարը անցկացվեց կուրս՝ I « Համակարգիչների շահագործում » և « Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում » մասնագիտությունների մոտ:

Դասընթացի ընդհանուր նպատակն էր.
Կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորմաքն կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

- 2022թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից անցկացվեց «Ի՞նչ է կարիերայի կենտրոնը (նպատակ, գործառույթներ)» թեմաներով դասընթացի հերթական հանդիպումները: Սեմինարը անցկացվեց կուրս՝ I I « Համակարգիչների շահագործում» մասնագիտության մոտ:

Դասընթացի ընդհանուր նպատակն էր.
Կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորմաքն կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

- 2022թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուն անցկացրեց «Ի՞նչ է էմոցիոնալ ինտելեկտը» թեմաներով սեմինար դասընթաց, մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» և « Խոհարարական գործ՝ խոհարար» 3 կուրսերի մոտ:

Ուսանողը կկարողանա իմանալ՝

- Էմոցիոնալ ինտելեկտի, նրա բաղադրիչների մասին
- Էմոցիաների մասին
- Միջանձնային և ներանձնային հարաբերությունների մասին և կկարողանան գիտակցել սեփական հույզերը
- Ներազդել սեփական հույզերի և հոգեվիճակի վրա

- Հասկանալ դիմացինի հուզական վիճակը
- Մոտիվացնել և ներազդել մյուսներին
- Ճանաչելով սեփական ուժեղ և թույլ կողմերը՝ ցուցաբերել ավելի վստահ վարք
- Արագ կողմնորոշվել դժվար և սթրեսային իրավիճակներում և լինել ավելի սթրեսադիմացկուն
- Խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից կամ արդյունավետ լուծել դրանք
- Կառուցել ավելի արդյունավետ հարաբերություններ

- **2022 թվականի սեպտեմբերի 22-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել է «Գործատուին ներկայանալու հմտություններ» խորագրով սեմինար-դասընթացներ, որը վարեց կենտրոնի ղեկավար Կիմա Ղարագյոզյանը: Դասընթացին մասնակցում էր «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում եվ սպասարկում» երկրորդ կուրսի ուսանողները, ընդհանուր նպատակն է՝ գործատուին ներկայանալու հմտությունների՝ արդյունավետ աշխատանքային հարցազրույցին մասնակցելու, մրցունակ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ գրելու կարողությունների ձևավորում:

- **2022 թվականի հոկտեմբերի 6-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել է «Աշխատանքի որոնմա նորագույն մեթոդներ » խորագրով սեմինար-դասընթացներ, որին մասնակցեցին « Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» III կուրսի ուսանողները:



- **2022 թվականի հոկտեմբերի 7-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը անցկացրեց «Անձի ինքնաբացահայտում» դասընթաց « Վերականգնվող էներգիայի էներգետիկ

կայանների մոնտաժում, նորոգում եվ սպասարկում » մաստագիտության II կուրսի մոտ: Ուսանողները իրենց հոգեվիճակին համապատասխան ընտրեցին գույներ և խոսեցին իրենց ապրումների մասին: Բոլորս միասին քննարկեցինք սեմինարի թեման և բացահայտեցինք միմյանց:

- **2022թ. հոկտեմբերի 14-ին** ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում անցկացվեց սեմինար դասընթաց, որի ընթացքում ուսանողներին հանձնարարվեց թղթերի վրա գրել երկու հարց, որը հետաքրքիր է իրենց: Այնուհետև թղթերը խառնեցինք և ուսանողները սկսեցին վերցնել և պատասխանել տարբեր հարցերի: Սեմինարը անցկացվեց « Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» և « Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» I կուրսերի մոտ:
- **2022թ. հոկտեմբերի 17-ին** ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնը « Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի մոտ անցկացվեց սեմինար «Ինչպես գրել ինքնակենսագրական» : Կարիերայի պատասխանատուն բաժանեց թերթիկներ և ուսանողները գրեցին CV-ներ :
- **2022 թվականի հոկտեմբերի 19-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել է « Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ձևավորման կարգը: 14-18 տարեկան աշխատողների աշխատանքային սահմանափակումները» դասընթաց, որին մասնակցեցին « Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» և « Խոհարարական գործ՝ խոհարար » III կուրսերի մոտ:

Նպատակն էր՝

- ✓ Աշխատողը կիմանա իր իրավունքները և պարտականությունները
- ✓ 14-18 տարեկան աշխատողների աշխատանքային ժամաքանակը
- ✓ Արձակուրդի մասին հավելյալ տեղեկություն

- **2022 թվականի հոկտեմբերի 20-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում Արցախի հանրապետության Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի, Եզնիկ-Մոզյան և Մարտունու արհեստագործական ուսումնարանների, «Անտոնիո Արսլան հայ- իտալական կրթահամալիր» հիմնադրամի դասախոսների, վարպետների և ուսանողների համար կազմակերպվել է սեմինար՝ «Կարիերայի ուղղորդման կենտրոնի գործառույթները» և «Հարցազրույցին ներկայանալու հմտությունները» թեմաներով:
- **2022թ. հոկտեմբերի 26-ին** ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնը անցկացրեց սեմինար « Խորհուրդներ առաջին անգամ աշխատանքի ընդունվողին» թեմայով,

որին մասնակցեցին մասնագիտության՝ « Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» և « Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» I կուրսի ուսանողները:

- ✓ Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները
- ✓ Կատարել աշխատանքի սահմանված նորմերը
- ✓ Ստանալ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը
- ✓ Ժամանակին ու լրիվ ծավալով ստանալ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը

- **2022թ. հոկտեմբերի 29-ին** ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի Կարիերայի ուղղորդման կենտրոնը անցկացրեց սեմինար « Ինքնանկարագիր» թեմայով, որին մասնակցեցին մասնագիտություն « Համակարգիչների շահագործում » և « Գեղանկարչություն և քանդակագործություն » III կուրսի ուսանողները: Նպատակն էր ուսանողներին սովորեցնել ինքնուրույն մտածել, իրենց տիպիկ բնութագրել:
- **2022 թվականի նոյեմբերի 15-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի ուղեկցությամբ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության ուսանողները այցելեցին «Միասին» Հիմնադրամ: Այցելության նպատակն էր սովորողներին ծանոթացնել կրուասանի պատրաստման դասական բարդ եղանակին: Հմուտ հրուշակագործը վարպետաց դասի ժամանակ մանրամասնորեն ներկայացրեց և ցուցադրեց կիսալուսնաձև նրբահամ բլիթների խմորի առանձնահատկություններին և պատրաստման եղանակին:
  Խոհարարական արտահագուստով լավագույն ուսանողները ևս իրենց անմիջական մասնակցությունն ունեցան կրուասանի թխման գործընթացին՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը և անվտանգության տեխնիկայի տիպային կանոնները:

- 2022թ. նոյեմբերի 16 -ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերիայի կենտրոնը կազմակերպել էր դասընթաց « Աշխատանքային օրենսգիրք» թեմայով: Սեմինարին մասնակցեցին մասնագիտություն « Ոսկերչություն՝ ոսկերիչ» I կուրսի մոտ: Ուսանողները կիմանան՝

- ✓ Աշխատանքային հարաբերությունների մասին
- ✓ նպաստել աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը
- ✓ պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը

- **2022 թվականի նոյեմբերի 17-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կիմա Ղարագյոզյանի ուղեկցությամբ մասնակցեցին Շիրակի տարածաշրջանային

պետական քոլեջի և ԽորանԱրդ ինտելեկտուալ կենտրոնի կողմից կազմակերպված «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ-մրցույթին:Միջոցառումը նվիրված էր ուսանողների միջազգային օրվան և նպատակ ուներ զարգացնելու երիտասարդ սերնդի ընդհանուր գիտելիքները: Խաղ-մրցույթը հմտորեն վարեց «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ» ՀԿ-ի ղեկավար Ս. Մարտիրոսյանը, ում շնորհիվ միջոցառումն իր ինքնատիպությամբ տարբերվող էր ու համապարփակ:

- **2022 թվականի դեկտեմբերի 9-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել էր «Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն» խորագրով սեմինար-դասընթաց: Դասընթացին մասնակցում էին « Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում » մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողները, որի նպատակն է ուսանողներին անձի ինքնահաստատման էության, նշանակության, գործոնների, ձևերի, բաղադրիչների վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդման ու ինքնագնահատման գործնական կարողությունների ձևավորմանը:

  Դասընթացի թեմաներն էին.

✓ **Ինքնագնահատում**
✓ **Ինքնագնահատման վրա ազդող գործոնները**
✓ **Ինքնագնահատման ձևերը**
✓ **Ինքնագնահատման հարցաշար**
✓ ՈՒԹՀՌ (SWOT) վերլուծություն

- **2022 թվականին դեկտեմբերի 20-ին** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Կարիերայի ուղղորդման կենտրոնը կազմակերպել էր «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում» խորագրով սեմինար-դասընթաց:
  Սեմինար-դասընթացի ընդհանուր նպատակն է.
  Նպաստել ուսանողների մոտիվացիայի էության, տեսությունների, կարիերայի ուղու վերաբերյալ գիտական գիտելիքների հաղորդման ու արդյունավետ աշխատանքի նկատմամբ դրական մոտիվացիայի ձևավորմանը:

  Դասընթացի թեմաներն էին.

✓ **Մոտիվացիայի էությունը**
✓ **Ինչպես մոտիվացվել**

Վերապատրաստումներ

1. 2022 թվականի սեպտեմբեր 15-17-ը զբաղվածության ոլորտում կիրառվող նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանության ներկայացման 3-օրյա աշխատաժողով.

Վերապատրաստման նպատակը

- Բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունը՝ սոցիալական ներառման, զբաղվածության և ինքնազբաղվածության ոլորտում կիրառվող «SHUTTLE» մեթոդաբանության վերաբերյալ,
- ներկայացնել մեթոդաբանության պատմությունը, կիրառման միջազգային և տեղական փորձը,
- ուսուցանել մեթոդաբանության իրականացման գործնական ասպեկտները՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ,
- զարգացնել դասընթացների պլանավորման և կազմակերպման հմտությունները,
- քննարկել մեթոդաբանության տեղայնացման խնդիրները:

Վերապատրաստման ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները

- EPIC ծրագիր Խոցելիության չափանիշների սահմանում
- SHUTTLE Ծրագիր Տեղեկատվական արշավ Ընտրության գործընթաց Պլանավորում և համակարգում
- SHUTTLE Ծրագիր Իրականացում Փափուկ հմտություններ
- SHUTTLE մեթոդաբանություն Խմբային դասընթացները Զբաղվածության Shuttle-ում
- SHUTTLE մեթոդաբանություն Խմբային դասընթացները Զեռներեցության Shuttle-ում

Վերապատրաստումներից հետո, «Փափուկ հմտությունների ձեռքբերում» թեմայի շրջանակներում ուսումնարանի ուսանողների համար նախատեսված է 4-ամսյա դասընթաց:

- 2022 թվականի նոյեմբերի 24-25-ը քաղաք Աղվերանում «Կարիերա Լաբ» կարիերայի և շարժունության կենտրոն, Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված սեմինար դասընթաց.

Վերապատրաստման նպատակը

ՄԿՈՒ հաստատություններում զարգացնել կարիերայի կենտրոնների մասնագետների գիտելիքներն ու հմտությունները և ամրապնդել կարողությունները՝ ՄԿՈՒ շրջանավարտների զբաղվածությունը նպաստելու համար:

Վերապատրաստման ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները .

- ՆՄԿՈՒ հաստատությունների կարիերայի կենտրոնների նպատակներն ու գործառույթները:
- Կարիերայի զարգացման աջակցությունն ավելի արդյունավետ դարձնելու գլոբալ մարտահրավերները:
- Թվայնացում և նորարարություն:

Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու

Կ. Հարությունյան